ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՆԳԻԴՈՒՆՅԱՆ ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՆԻ

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ ՀՀ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ (ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)

ԻԲ.00.01- «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2025

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Մկրտիչյան Արթուր Երվանդի**
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու, դոցենտ **Մելքոնյան Նվարդ Արահիկի** Սոցիոլոգիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Զասլավսկայա Մարիա Իգորի**
Առաջատար կազմակերպություն՝	**ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ**

Պաշտպանությունը կայանալու է 2025 թվականի սեպտեմբերի 17-ին, ժամը 15:00-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Փիլիսոփայության և սոցիոլոգիայի 013 մասնագիտական խորհրդում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52 ա, ԵՊՀ:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թվականի հունիսի 25-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ **Արման Ղարագուլյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունում, համայնքային խոշորացման գործընթացի ավարտով պայմանավորված, առկա է 71 համայնք, որից 64-ը խոշորացված: Խոշորացման, նախանշված մոտեցումներից բազմակի շեղումներն ու փոփոխությունները, ինչպես նաև տեղական ինքնակառավարման օրենսդրական նոր կարգավորումները, որոնք ենթադրում էին տեղական ժողովրդավարության և որոշումների կայացման մակարդակի էական նվազեցում ստեղծեցին իրավիճակ, որտեղ հարցականի տակ է դրված բնակավայրերի սոցիալ-տնտեսական կայունությունը, տեղական ինքնակառավարման լիազորությունների պրակտիկ կիրառկումը, ինչպես նաև մեծ բնակավայրերից կախվածության համաչափության ապահովումը: Համայնքային խոշորացման գործընթացում հանրային ցածր մասնակցայնությունը ենթադրում է իրականացվող քաղաքականության և այն իրականացնողների նկատմամբ բնակչության շրջանում անվստահության անկառավարելի աճ, ինչը նմանօրինակ հարաբերություններով վերարտադրվող սոցիալ-տարածական պրակտիկաները վերածում է հասարակական կյանքի ապագործառնական միավորների: Թվարկված խնդիրները, կարող են խաթարել հասարակական հարաբերությունների կայունությունը՝ հանգեցնելով տնտեսական, սոցիալական և քաղաքական ցնցումների: Այս համատեքստում, չնայած, առկա են մի շարք ինչպես արտասահմանյան (Յու. Բլագով, Դ. Տարասենկո, Ա. Վաֆա, Յու. Լի) այնպես էլ տեղական (Ե. Վարդանյան, Ք. Թաթոսյան, Շ. Հարությունյան) հետազոտություններ, որոնք բացահայտում են խոշորացման հետևանքով հասարակության տնտեսական և սոցիալական կյանքում տեղի ունեցած փոփոխությունները, սակայն համայնքներում իրականացված փոփոխությունների վերաբերյալ հասարակական ընկալումների, ինչպես նաև տարածքային կառավարման սոցիալ-տարածական պրակտիկաների բացահայտման շրջանակում դիտվում է գիտելիքի սղություն: Քննարկված հիմնախնդրի արդիականությամբ պայմանավորված, ՀՀ խոշորացված համայնքներում տարածքային կառավարման սոցիալ-տարածական պրակտիկաների վերհանումը թույլ կտա գնահատել ստեղծված իրողություններում հասարակական հարաբերությունների վերարտադրման առնանձահատկությունները և նախանշել համայնքների կայուն զարգացման նոր հնարավորությունները:

Սույն ատենախոսության հետազոտական **օբյեկտը** ՀՀ խոշորացված համայնքներն են, իսկ **առարկան՝** տարածքային կառավարման սոցիալ-տարածական պրակտիկաները: Աշխատանքի **նպատակն է՝** վերհանել ՀՀ

խոշորացված համայնքներում տարածքային կառավարման սոցիալ-տարածական պրակտիկաները: Հետազոտական **խնդիրներն են՝**

1. Վերհանել ՀՀ խոշորացված համայնքներում սոցիալ-տարածական պլանավորման պրակտիկաները
   1) Բացահայտել ՀՀ բնակավայրերի բնակիչների տեղի զգացումը
   2) Պարզել ՀՀ խոշորացված համայնքների բնակիչների սոցիալական կայունությունը
2. Վերհանել ՀՀ խոշորացված համայնքներում տարածքային կառավարման գործընթացների վերահսկման պրակտիկաները
   1) Բացահայտել տարածքային զարգացման գործընթացների վերահսկման շրջանակներում տարածական հավասարության ապահովման առկա վիճակը
   2) Բացահայտել ՀՀ խոշորացված համայնքների ՏԻՄ-երի կարողունակությունը և ժողովրդավարությունը
   3) Բացահայտել ՀՀ խոշորացված համայնքների առանձին բնակավայրերում տեղի լիդերության ընկալումները
3. Պարզել ՀՀ խոշորացված համայնքների տարածական կազմակերպման գործող մեխանիզմները
   1) Պարզել բնակչության ներհամայնքային վերաբաշխման առանձնահատկությունները
   2) Պարզել աշխատանքային ռեսուրսների բաշխվածությունը
   3) Պարզել առողջապահական առկա ռեսուրսները
   4) Պարզել կրթություն ստացողների, մանկավարժների/դասախոսների և կրթական ենթակառուցվածքների փոխհարաբերակցումը

Թեմայի տեսական հիմքերն ու գիտական մշակվածության աստիճանը

Տարածքային կառավարման վերաբերյալ գիտելիքի էվոլյուցիոն զագացման ընթացքում տարածության սուբյեկտիվ իմաստավորումների սոցիալ-փիլիսոփայական մեկնաբանումից անցում է կատարվել սոցիալ-տարածական պրակտիկաների համակարգային վերլուծության: Յ. Տուանը, Ք. Թվիգեր-Ռոսսն ու Դ. Ուզզելը շեշտադրում են տարածության և տեղի հարաբերակցման առաջնայնությունը, որտեղ տարածությունից՝ տեղ փոխակերպումը իրականացվում է սուբյեկտների և վերջիններիս ապրված փորձի հետ փոխազդեցություններով պայմանավորված իմաստավորմամբ: Նշյալ հեղինակների մոտեցումները լրացվում են՝ Ռ. Ռուբինսշտեյնի, Պ. Փարմելի, Դ. ՄաքՄիլանի և Դ. Չավիսի կողմից, ովքեր

տարածության սուբյեկտիվ իմաստավորումների տիրույթ են ներմուծում տեղի կապվածության ու համայնքի զգացման ֆենոմենները: Իբրև տարածքային կառավարման սոցիալ-տարածական պլանավորման բաղադրիչի առանձին չափումներ առաջարկվում են, նաև սուբյեկտների կողմից տարածության ֆիզիկական, տեղեկատվական և սոցիալական չափումներում ներգրավվածության (Օ. Չերնյավսկայա) և պրակտիկ ներգրավման (Լ. Հորելի) մոտեցումները: Մի շարք աշխատություններում փորձ է արվում տարածքային կառավարման գործընթացը դիտարկել ոչ միայն սոցիալ-տարածական պլանավորման այլև տարածական կազմակերպման և վերահսկման տիրույթում: Տարածական կազմակերպման համատեքստում Վ. Վոլպատին և Մ. Բարտոլոմեյը առաջարկում են սահմանափակ տարածությունում բնակչության տարածական հետերոգեն կառուցվածքը հետազոտող ինդիկատորներ, որոնք հետագայում զարգացվում են Ա. Բերտրոյի աշխատություններում: Ա.Շաֆիքը առաջարկում է տարածական կազմակերպման տարածա-ֆիզիկական բաղադրիչը լրացնել սոցիալական զգայունության չափումներով, որոնք առնչվում են բնակչության կողմից ենթակառուցվածքների, ծառայությունների ու հարմարությունների հասանելիությանը: Տարածական վերահսկման շրջանակներում Մ. Սոթարաթան և Ա. Բիրը պնդում են, որ իմաստավորված տարածության և լիդերության գաղափարները հատվում են տեղի լիդերության հասկացության ներքո, որում առանձնակիորեն շեշտադրվում են լիդերության տեղադրական, տեղայնական և տեղի զգացման բնորոշումները: Ներկայումս, տարածքային կառավարման սոցիալ-տարածական պրակտիկաների հետազոտությունները կիզակետվում են համայնքային խոշորացմանն առնչվող գիտելիքի կառուցման շուրջ և, պատահական չեն սույն թեմայով ինչպես օտարազգի (Ա. Վաֆա, Յու. Բլագով, Վ. Բաբինցեվ) այնպես էլ տեղի հեղինակների կողմից առաջարկվող մոտեցումները (Հ. Խաչատրյան, Ս. Խաչիկյան և այլք), որոնք վերաբերվում են համայնքային խոշորացման համատեքստում սոցիալական ենթակառուցվածքների կառավարման առանձնահատկություններին, ինչպես նաև դրանց երկակի ազդեցությամբ պայմանավորված հանրության սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխություններին:

Հետազոտության մեթոդաբանությունը

Սույն ատենախոսությունում կիրառվել են քանակական հարցման, փաստաթղթերի ավանդական վերլուծության և տվյալների երկրորդային վերլուծության մեթոդները: Քանակական հարցման միջոցով պարզվել են խոշորացված համայնքների բնակչության տարածական ներգրավվածության, տեղի զգացման, սոցիալական կապիտալի, ինչպես նաև ՏԻՄ գործունեության և տեղի

լիդերության դերի ընկալման առանձնահատկությունները: Փաստաթղթերի ավանդական վերլուծությունը կիրառվել է համայնքային խոշորացման, համայնքային զարգացման պետական որոշումների և ծրագրերի վերլուծման, նաև տարածական հավասարության բաղադրիչի առկա վիճակի վերհանման համատեքստում: Տվյալների երկրորդային վերլուծությամբ առանձնացվել և վերլուծվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՏԿԵՆ նախարարության, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հրապարակված և առցանց հասանելի շտեմարաններում ներկայացվող տվյալներ: Հետազոտության իրականացման համար կառուցվել է **բազմաքայլ պատահական ընտրանք**: Առաջին փուլում կառուցվել է շերտավոր համամասնական ընտրանք, ըստ ՀՀ մարզերի մշտական բնակչության թվի, ապա դրա հիման վրա ձևավորվել է կլաստերային ընտրանք՝ յուրաքանչյուր կլաստերի ծավալը սահմանելով 14: Վստահության 95% մակարդակի, 5% սխալի սահմանի և հետազոտվող ֆենոմենի տարածվածության 50%-ի ընդունմամբ ստացվող պարզ պատահականային ընտրանքի ծավալի և դիզայն էֆեկտի 1.55 գործակցով ձևավորված ընտրանքի ծավալն է՝ 600:

Ատենախոսության գիտական նորույթները ներկայացվում են ստորև.

1. Առաջարկվում է տարածքային կառավարման նոր սահմանում, որը հիմնվում է տարածական կազմակերպման, տարածական վերահսկման և սոցիալ-տարածական պլանավորման բաղադրիչների վրա:
2. Ձևավորվում է տարածական ներգրավվածության գործոնային մոդել՝ հիմնված իմաստավորված տարածությունում ներգրավման ֆիզիկական, տեղեկատվական և սոցիալական չափումների վրա, ինչպես նաև չափվում է առանձին գործոնների ազդեցությունը տարածական ներգրավվածության ցուցանիշների վրա:
3. Գնահատվում է տեղի կապվածության, համայնքի զգացման և տեղի ինքնության բաղադրիչներով կառուցվող տեղի զգացման գործոնային մոդելի կառուցվածքային ռելեվանտությունը և առանձին գործոնների ազդեցությունը տեղի զգացման ցուցանիշների վրա:
   3.1. Տրվում է տեղի զգացման նոր սահմանում
4. Կառուցվում են մոդելներ, որոնք ըստ սոցիալ-տարածական պլանավորման, տարածական կազմակերպման և վերահսկման բաղադրիչների ցույց են տալիս նշյալներով պայմանավորված.
   4.1. բնակչության շրջանում խոշորացման ազդեցության ընկալումները

4.2. իրենց բնակավայրերում իրականացվող փոփոխություններին մասնակցության ցանկությունը:

5. Սոցիալ-տարածական պլանավորման և տարածական վերահսկման առանձին բաղադրիչներով իրականացվում է կլաստերիզացում, որով, ըստ սոցիալ-տարածական պրակտիկաների առանձնացվում են ՀՀ խոշորացված համայնքները:
6. Ցույց է տրվում, որ ՀՀ խոշորացված համայնքներում տարածքային կառավարման համակարգի սոցիալ-տարածական պլանավորման, տարածական կազմակերպման և վերահսկման պրակտիկաների պարզ վերարտադրությունը հանգեցնում է բնակավայրերի բազմաչափ խոցելիության:

Ատենախոսական աշխատանքի հիմնական վարկածն է. ՀՀ խոշորացված համայնքներում տարածքային կառավարման համակարգի սոցիալ-տարածական պլանավորման, տարածական կազմակերպման և վերահսկման պրակտիկաների պարզ վերարտադրությունը հանգեցնում է բնակավայրերի բազմաչափ խոցելիության:

Լրացուցիչ վարկածներն են՝

1. Տարածական ներգրավվածության ցուցանիշի աճը բարձրացնում է բնակչության շրջանում բնակավայրերում իրականացվող փոփոխություններում մասնակցության ցանկության հավանականությունը:
2. Սոցիալական կապիտալի, տեղի լիդերության և խոշորացված համայնքներում դիսպերսիոն ինդեքսի աճը բարձրացնում է բնակչության շրջանում համայնքային խոշորացման ազդեցության վերաբերյալ դրական ընկալումների հավանականությունը:
3. ՀՀ խոշորացված համայնքների բնակավայրերում բնակչության տեղեկատվական, ֆիզիկական և սոցիալական ներգրավվածությունները տարածական ներգրավվածությունը վերարտադրող գործոններ են:
4. Տեղի կապվածությունը, համայնքի զգացումը և տեղի ինքնությունը ՀՀ խոշորացված համայնքների բնակավայրերում բնակիչների տեղի զգացումը վերարտադրող գործոնային բաղադրիչներ են:

Պաշտպանության ներկայացվող դրույթները հետևյալն են.

1. ՀՀ խոշորացված համայնքներում տարածքային կառավարման համակարգի սոցիալ-տարածական պլանավորման, տարածական կազմակերպման և

վերահսկման պրակտիկաների պարզ վերարտադրությունը հանգեցնում է բազմաչափ խոցելիության:

2. Ըստ սոցիալ-տարածական պլանավորման և տարածական վերահսկման բաղադրիչների առկա է տարբերակում ՀՀ խոշորացված համայնքներում:
3. ՀՀ խոշորացված համայնքների բնակիչների տեղեկատվական, ֆիզիկական և սոցիալական ներգրավվածությունները վերարտադրում են բնակավայրերում տարածական ներգրավվածությունը:
4. ՀՀ խոշորացված համայնքներում բնակչության տեղի կապվածությունը, համայնքի զգացումը և տեղի ինքնությունը վերարտադրում են տեղի զգացումը:
5. Բնակչության շրջանում խոշորացման ազդեցության ընկալումները պայմանավորվում են տեղի լիդերության, սոցիալական կապիտալի և խոշորացված համայնքներում բնակչության դիսպերսիոն ինդեքսի ցուցանիշներով:
6. Բնակավայրերում իրականացվող փոփոխություններին մասնակցության ցանկությունը պայմանավորվում է տարածական ներգրավվածությամբ:

Ատենախոսական հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը

Ատենախոսության արդյունքների **տեսական նշանակության** տեսանկյունից, առաջարկվող օպերացիոնալ համակարգը, թույլ կտա նորովի իմաստավորել տարածքային կառավարման տեսական մոտեցումներով վերարտադրվող գիտելիքի առկա համակարգը: Սույն օպերացիոնալ համակարգը, դիտարկելով տարածական կազմակերպումը, վերահսկումն ու սոցիալ-տարածական պլանավորումը մեկ ընդհանուր կոնցեպտուալ միավորի՝ տարածքային կառավարման, շրջանակում, հնարավորություն է ընձեռում քննարկել թվարկված բաղադրիչները միմյանց հետ փոխկապվածության մեջ և առաջադրել այդ փոխկապվածությունը բնութագրող նոր միտումներ ու օրինաչափություններ: **Գործնական նշանակության** համատեքստում ատենախոսության մեթոդաբանական նորույթները կարող են նպաստել ՀՀ-ում իրականացված համայնքային խոշորացման վերաիմաստավորմանը, մասնավորապես առաջնային շահառու հանդիսացող խոշորացված բնակավայրերի բնակիչների ընկալումների և նոր իրողություններում սոցիալ-տարածական պրակտիկաների վերարտադրության առանձնահատկությունների մասով, իսկ ստացված արդյունքները՝ ոչ միայն համայնքային խոշորացման, այլև տարածքային բարեփոխումների ծրագրերի հնարավոր սոցիալական ազդեցության վերաբերյալ ինչպես հանրային, այնպես էլ մասնագիտական դիսկուրսի վերարժևորմանը:

Հետազոտական արդյունքների փորձարկում: Հետազոտության հիմնական դրույթներն ու եզրահանգումները քննարկվել են.

- Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի սոցիոլոգիայի տեսության և պատմության ամբիոնում
- «Ժողովրդավարության ճոճանակը. ինքնության ճգնաժամ և արժեքների փոխակերպում»/"The pendulum of democracy. Identity crisis and transformation of values" միջազգային գիտաժողովում (12 նոյեմբերի 2024թ., Երևանի պետական համալսարան, Երևան, ՀՀ)

Ատենախոսության արդյունքները հրապարակվել են հեղինակի **6** գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 2 գլխից, 7 ենթագլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Ի լրումն ատենախոսության՝ տրվում են, նաև 3 հավելվածներ: Տեքստի ծավալը՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը և բովանդակությունը՝ **160** էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում ներկայացվել և հիմնավորվել է թեմայի արդիականությունը: Սահմանվել են հետազոտության օբյեկտը, առարկան և նպատակը, դրանից ածանցվող խնդիրները, ինչպես նաև հիմնական և լրացուցիչ վարկածներն ու հետազոտության մեթոդաբանական հիմքերը: Ներածությունում իրականացվել է նաև թեմայի գիտական մշակվածության վերլուծություն, գիտական նորույթների և պաշտպանության ներկայացվող դրույթների առաջադրում ու ատենախոսության արդյունքների տեսական և գործնական նշանակության հիմնավորում:

Առաջին գլուխը՝ «Տարածքային կառավարման կոնցեպտի տեսամեթոդաբանական կառուցվածը», բաղկացած է 3 ենթագլխից:

«Տարածության սուբյեկտիվ և ինտերսուբյեկտիվ իմաստավորումները տարածության վերարտադրության համատեքստում» վերտառությամբ **առաջին ենթագլխում** քննության են ենթարկվում տարածության և դրանում գործառող սուբյեկտների միջև փոխազդեցությունները, որոնք հիմնվում են տարածության իմաստավորման գործընթացների վրա: Գրականության վերլուծությամբ պարզ է դառնում, որ տարածությունների հետ անհատների կամ սոցիալական խմբերի փոխազդեցությունները հիմնվում են տարածության և տեղի հարաբերակցման վրա, իսկ նշյալ փոխազդեցությունները մեկնաբանելի են, ինչպես տարածական

պրակտիկաների, ներկայացումների և ներկայացման տարածությունների, այնպես էլ՝ տեղի ինքնության, տեղի կապվածության և համայնքի զգացման համատեքստում: Տեղի կապվածության, ինքնության և համայնքի զգացման ֆենոմենները, միավորվում են մեկ կոնցեպտուալ միավորի տեղի զգացման ներքո, որի համատեքստում, առաջարկվում է տեղի զգացման նոր սահմանում: Այն. *«իմաստավորված տարածությունների նկատմամբ սեփական ինքնության սահմանման, կապվածության և միևնույն տարածությունը կիսող համայնքին պատկանելիության զգացման անհատական կոգնիտիվ, աֆեկտիվ և կոնատիվ գործընթացների ամբողջություն է»*[1]:

Երկրորդ՝«Տարածքային կառավարումը, որպես սոցիալական տարածության վերարտադրության պրակտիկա. Տարածքային կառավարման սոցիալ-տարածական պլանավորման, տարածական կազմակերպման և վերահսկման բաղադրիչները» ենթագլխում անդրադարձ է կատարվում տարածքային կառավարմանը, որպես իմաստավորված տարածությունների վերարտադրության և սպառման բազմաչափ համակարգ: Սոցիալ-տարածական պլանավորումը, որպես տարածքային կառավարման բաղադրիչ, սահմանվում է նախագծվող փոփոխություններում և դրանց վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում բազմաշահառու մասնակցայնության և իշխանության հակակշռման համատեքստում, որտեղ մասնակցայնությունը վերարտադրվում է բնակավայրի ֆիզիկական, տեղեկատվական և սոցիալական տարածություններում: Տարածության արդյունավետ սպառման և տնօրինման տեսանկյունից սոցիալ-տարածական պլանավորումից զատ ի հայտ են գալիս տարածական կազմակերպման և վերահսկման բաղադրիչները, որոնցում, կենտրոնական են տեղական ինստիտուտների և սոցիալական հանրույթի փոխհարաբերությունները առաջնորդության և ՏԻՄ-երի կարողունակության ու ժողովրդավարության շրջանակում: Հիմնվելով սոցիալ-տարածական պլանավորման, տարածական կազմակերպման և տարածական վերահսկման այսօրինակ մոտեցումների առկայության, ինչպես նաև ընդհանուր մեթեջմենթի հիմնարար գործառույթների վրա, տրվել է տարածքային կառավարման նոր սահմանում, համաձայն որի այն. *«տարածքի օգտագործման և զարգացման պլանավորման, կազմակերպման և վերահսկման գործընթաց է, որը ներառում է տարբեր ռազմավարություններ, քաղաքականություններ և գործողություններ, որոնք իրականացվում են պետական կառավարման/ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և*

[1]Տե՛ս Ենգիդունյան Վ. «ՀՀ խոշորացված համայնքների բնակչության տեղի զգացման գործոնային կառուցվածքը» Регион и мир №1(56), 2025, էջ 139 DOI: 10.58587/18292437-2025.1-135

համայնքի ներկայացուցիչների կողմից՝ ապահովելու բնակեցված և ոչ բնակեցված վայրերի ռեսուրսների և ենթակառուցվածքների կայուն և արդյունավետ օգտագործումը սահմանված տարածքում»[2]:

Ատենախոսության առաջին գլխի վերջին՝ **«Համայնքային խոշորացումը որպես տարածքային կառավարման պրակտիկա. Համայնքային խոշորացման սոցիալ-տարածականությունը»** վերտառությամբ **երրորդ** ենթագլխում քննարկվում են, համայնքային խոշորացման, որպես տարածքային կառավարման պրակտիկայի առանձնահատկությունները ու այդ համատեքստում սոցիալ-տարածական պրակտիկաների վերարտադրության հնարավորությունները: Համայնքային խոշորացումը այն պրակտիկան է, որում սոցիալական ենթակառուցվածքների կառավարման գործընթացները, ի տարբերություն տարածքային կառավարման այլ պրակտիկաների, հանգում են դրանց առանձնահատկությունների և համայնքային կյանքում ունեցած նշանակության վերաիմաստավորման: Միևնույն ժամանակ, համայնքային խոշորացման երկակի ազդեցությունը ապակենտրոնացման և կենտրոնից կախվածության հավասարակշռման շրջանակում ինքնին ենթադրում է գործընթաց, որում միավորվող համայնքների սոցիալ-տնտեսական առանձնահատկություններից կախված հնարավոր են ինքնակառավարման մակարդակի նվազեցում և համայնքի կյանքի որակի վատթարացում: Խոշորացման շրջանակում համայնքների կայուն և շարունակական զարգացման, ինչպես նաև հնարավոր ռիսկերի գնահատման տեղական և միջազգային աշխատությունները մատնանշում են, հանրային ծառայությունների մատուցման որակական աճի ապահովման և բնակիչների տեղի զգացման համատեքստում առկա խնդիրներ, որոնք ընդգծում են տարածքային կառավարման սոցիալ-տարածական պրակտիկաների պարզ վերարտադրությունը և դրանով պայմանավորված՝ համայնքներում բազմաչափ խոցելիությունը:

Ատենախոսության **երկրորդ գլուխը՝ «Սոցիալ-տարածական պլանավորումը, տարածական կազմակերպումն ու վերահսկումը, որպես ՀՀ խոշորացված համայնքներում տարածքային կառավարումն ու դրա վերաբերյալ հանրային ընկալումները պայմանավորող գործոններ»**, նվիրված է սույն ատենախոսության շրջանակներում իրականացված հետազոտության տվյալների վերլուծությանը: Երկրորդ գլխի **առաջին ենթագլխում՝ «Տարածական կազմակերպումը ՀՀ խոշորացված համայնքներում»** իրականացվել է ՀՀ

[2]Տե՛ս Yengidunyan V., Territorial Management in The Sphere of Social-Spatial Planning, Spatial Organization and Control as A Practice of Reproduction of The Social Space Journal of Sociology: Bulletin of Yerevan University 2024, Vol. 15, No. 1(39), p.82, https://doi.org/10.46991/BYSU:F/2024.15.1.073

խոշորացված համայնքների, տարածական կազմակերպման բազմակողմանի վերլուծություն: Բնակչության տարածական ցրվածության ինդեքսի ցուցանիշների համաձայն ամենաբարձր արդյունքը գրանցվել է Սյունիքի Տաթև խոշորացված համայնքում, իսկ ամենացածր արդյունքը՝ Լոռու մարզի Վանաձոր խոշորացված համայնքում: Տարածական կազմակերպման հաջորդ՝ սոցիալ-տնտեսական բաղադրիչի վերլուծության համատեքստում աշխատուժի ցուցանիշները արձանագրում են, որ սույն ցուցիչով առաջատար է Արմավիրի մարզը, որին հաջորդում են Արարատի և Կոտայքի մարզերը, իսկ ամենացածր ցուցանիշներն արձանագրվել են Վայոց Ձորում: Չնայած գյուղական բնակավայրերում Արմավիրի մարզը շարունակում է առաջատարի դիրք զբաղեցնել, սակայն քաղաքային բնակավայրերում այդ դիրքը զբաղեցնում է Կոտայքի մարզը: Ըստ հանրակրթական ուսումնական հաստատություններում հաճախելիության ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Կոտայքի մարզում, որին հաջորդում են Արարատի և Արմավիրի մարզերը: Այս ինդիկատորով ամենացածր ցուցանիշը կրկին պատկանում է Վայոց Ձորին: Առողջապահական ցուցանիշների համաձայն, եթե 10000 բնակչի հաշվով միջին բուժանձնակազմի շրջանակներում ամենաբարձր ցուցանիշն ունի Շիրակի մարզը, ապա բժիշկների թվաքանակով առաջատարն է Լոռու մարզը:

«Սոցիալ-տարածական պլանավորման բաղադրիչները» վերտառությամբ **երկրորդ ենթագլխում,** վերլուծության են ենթարկվել ՀՀ խոշորացված համայնքների բնակիչների տեղի զգացումը և սոցիալական կայունությունը՝ հանձին տարածական ներգրավվածության և մասնակցայնության: Համաձայն ՀՀ խոշորացված համայնքների բնակչության տեղի զգացման գործոնային վերլուծության, տեղի կապվածությունը, տեղի ինքնությունը և համայնքի զգացումը համարվում են տեղի զգացումը պայմանավորող գործոններ: Կառուցված մոդելում ընդհանուր վարիացիայի ամենամեծ մասնաբաժինը պատկանում է տեղի կապվածության գործոնին, որին հաջորդում են տեղի ինքնությունը և համայնքի զգացումը: Տարածական ներգրավվածության դեպքում ամենամեծ ազդեցությունն ունի տեղեկատվական ներգրավվածությունը, ապա սոցիալական և ֆիզիկական ներգրավվածությունները: Տվյալների նկարագրական վերլուծության համաձայն՝ հարցման մասնակիցների գերակշիռ մեծամասնությունը նշել է, որ ցանկանում է մասնակցել իրենց բնակավայրում տեղի ունեցող փոփոխություններին, մինչդեռ միայն 20.7%-ն է ունեցել նմանատիպ փորձառություն: Համայնքային խոշորացման ազդեցության վերաբերյալ հարցին հարցվածների 42.1% նշել է ազդեցության բացակայությունը: Ի տարբերություն տղամարդկանց՝ կանայք ցուցաբերում են

տեղի կապվածության, ինքնության և համայնքի զգացման, այնպես էլ տարածական ներգրավվածության նշանակալիորեն ցածր ցուցանիշներ:

Երկրորդ գլխի **երրորդ ենթագլխում՝ «Տարածական վերահսկումը տարածական հավասարության, տեղի լիդերության և կարողունակ ու ժողովրդավար տեղական ինքնակառավարման տիրույթում»** վերլուծվել են տարածքային կառավարման վերջին ենթահամակարգի, տարածական վերահսկման, բաղադրիչները: ՀՀ խոշորացված համայնքների բնակիչների գերակշիռ մեծամասնության կարծիքով իրենց բնակավայրի առաջնորդները կարողանում են ոգեշնչել բնակիչներին և առաջարկում են բնակավայրի զարգացման վերաբերյալ մտածողության նոր ձևեր: Առաջնորդների կողմից բանկիչներին ուղղորդելու վերաբերյալ ընկալումների համատեքստում 44-54 տարեկան անձիք ավելի հակված են ընդունելու սույն պնդումը, քան տարիքային մնացած խմբերին պատկանող բնակիչները: Զուգահեռաբար, տղամարդիկ ավելի շատ են հավատում ղեկավարի ու ավագանու կողմից դիրքի չչարաշահմանը, քան կանայք: ՏԻՄ-երի կարողունակության և ժողովրդավարության գնահատման տեսանկյունից ավագանու նիստերի առցանց հեռարձակում իրականացնող 63 համայնքների շրջանում ամենամեծ մասնաբաժինները պատկանում են Լոռու և Կոտայքի մարզերին: Միաժամանակ, համայնքի ղեկավարների մոտ ամենաշատ թվով ընդունելությունները իրականացվել են Տավուշի, իսկ ամենաքիչը՝ Սյունիքի մարզում: Մտահոգիչ է, որ ավագանու մոտ ընդունելությունների մասով Սյունիքի մարզում ընդհանրապես չեն գրանցվել այցեր: ՏԻՄ ներկայացուցիչների կողմից իրականացված այցերի թվով առաջատար է Լոռու մարզը, իսկ ամենացածր տեսակարար կշիռները գրանցվել են Սյունիքի և Տավուշի մարզերում: Տարածական հավասարության ապահովման համատեքստում, չնայած առկա են սոցիալական բնակարանաշինության, գյուղատնտեսական հողակտորների արդյունավետ կառավարման զարգացման իրավական խթաններ, սակայն համընդհանուր ռազմավարության բացակայությունը լուրջ ռիսկեր է ստեղծում իրականացվող ծրագրերի արդյունավետության վրա: Գործող իրավական կարգավորումների կիրառկման արդյունքների գնահատման տեսանկյունից հանրային ծառայությունների որակին առնչվող ցուցանիշների համաձայն գազամատակարարման ընդհատումների միջին տևողությամբ առաջատար է Շիրակի մարզը, որին հաջորդում են Սյունքի և Վայոց Ձորի մարզերը, իսկ էլեկտրաէներգիայի մատակարարումների խափանման տեսանկյունից՝ Գեղարքունիքի մարզը:

Երկրորդ գլխի վերջին՝ չորրորդ ենթագլխում՝ **«Սոցիալ-տարածական պրակտիկաների հանրային ընկալումները ՀՀ խոշորացված համայնքներում»** դուրս են բերվել տարածական կազմակերպման, սոցիալ-տարածական պլանավորման և տարածական վերահսկման բաղադրիչների միջև առկա մի շարք փոխառնչություններ, որոնք պայմանավորում են ՀՀ-ում համայնքային խոշորացումից հետո տարածքային կառավարման գործող համակարգը: Ցույց է տրվել, որ.

1. *Սոցիալական կապիտալի, տեղի լիդերության և խոշորացված համայնքներում դիսպերսիոն ինդեքսի աճը բարձրացնում է բնակչության շրջանում համայնքային խոշորացման ազդեցության վերաբերյալ դրական ընկալումների հավանականությունը:*
2. *Տարածական ներգրավվածության ցուցանիշի աճը բարձրացնում է բնակչության շրջանում բնակավայրերում իրականացվող փոփոխություններում մասնակցության ցանկության հավանականությունը:*

Ունենալով տարածական կազմակերպման, վերահսկման և սոցիալ-տարածական պլանավորման չափելի տվյալներ, իրականացվել է խոշորացված համայնքների երկմակարդակ կլաստերիզացում: Կլաստերների փոփոխականների գրանցած միջին ցուցանիշները ցույց են տալիս, որ ըստ տեղի զգացման, տարածական ներգրավվածության և տեղի լիդերության, առաջին կլաստերում համեմատած երկրորդ կլաստերի գրանցվել են առավել բարձր ցուցանիշներ: Ստացված արդյունքների համաձայն, Գավառ խոշորացված համայնքը ընդգրկվել է երկրորդ կլաստերում:

Ատենախոսության **եզրակացությունում** ամփոփվել և ներկայացվել են հետազոտական ներքոնշյալ արդյունքները և եզրահանգումները, ինչպես նաև վերոնշյալների շրջանակում ձևակերպվել են ընթացակարգային առաջարկները.

1. Հետազոտության հիմնախնդրի համատեքստում իրականացված գրականության վերլուծությամբ առանձնացվել և խմբավորվել են տարածքային կառավարման սոցիալ-տարածական պրակտիկաները՝ հիմնվելով կառավարման ընդհանուր գործառույթների տիպաբանության վրա: Իրականացվել է տարածքային կառավարման օպերացիոնալացում, որը կառուցվել է սոցիալ-տարածական պլանավորման, տարածական կազմակերպման և վերահսկման բաղադրիչներով: Ստացված կառուցվածքը թույլ է տվել առաջադրել տարածքային կառավարման նոր սահմանում, ինչպես նաև ստեղծել է հնարավորություն վերահմաստավորելու տարածքային կառավարման հետազոտման գործող մեթոդաբանությունները:

2. Մեթոդաբանական սույն մոտեցման կիրառմամբ քննարկվել են ՀՀ խոշորացված համայնքներում տարածքային կառավարման սոցիալ-տարածական պրակտիկաների վերարտադրության առանձնահատկությունները: Իրականացվել է տեղի զգացման և տարածական ներգրավվածության գործոնային վերլուծություն, համաձայն որի, տեղի կապվածությունը, տեղի ինքնությունը և համայնքի զգացումը վերարտադրում են ՀՀ խոշորացված համայնքների բնակչության տեղի զգացումը, իսկ ֆիզիկական, տեղեկատվական և սոցիալական ներգրավվածությունները՝ տարածական ներգրավվածությունը:
3. ՀՀ խոշորացված համայնքներում տարածքային կառավարման սոցիալ-տարածական պրակտիկաների վերարտադրության հետագա հետազոտման համատեքստում կառուցվել են կարգային ռեգրեսիոն մոդելներ, որոնց միջոցով վերլուծվել են խոշորացման վերաբերյալ հանրային ընկալումների հնարավոր պայմանավորվածությունը վերոշարադրյալ պրակտիկաներով: Ապացուցվել է այն վարկածը, որի համաձայն՝ համայնքային խոշորացման ազդեցության վերաբերյալ բնակչության ընկալումները պայմանավորված են սոցիալական կապիտալի, տեղի լիդերության և խոշորացված համայնքներում դիսպերսիոն ինդեքսի ցուցանիշներով: Փոփոխականների միջև ռեգրեսիոն կապվածության ուղղությունը, թույլ տվեց հաստատել այն վարկածը, որի համաձայն սոցիալական կապիտալի, տեղի լիդերության և դիսպերսիոն ինդեքսի ցուցանիշի աճը բարձրացնում է խոշորացման ազդեցության վերաբերյալ դրական ընկալումների հավանականությունը: Բնակավայրերում իրականացվող փոփոխություններին մասնակցության ցանկության դեպքում նմանատիպ ազդեցություն ունի տարածական ներգրավվածության փոփոխականը:
4. Իրականացված վերլուծությունը ցույց տվեց, որ իգական սեռի ներկայացուցիչներն իրենց օտարված են զգում բնակավայրերում տեղի ունցող գործընթացներից՝ ինչը ենթադրում է, որ խոշորացված համայնքների բնակավայրերում մասնագիտական և կարողունակ աշխատուժի ներգրավվածությունը սահմանափակ է: Ի տարբերություն արական սեռի ներկայացուցիչների, կանայք ավելի քիչ են հակված մասնակցելու բնակավայրերում տեղի ունեցող փոփոխություններին և դրանց վերաբերյալ որոշումների կայացմանը՝ մեջբերելով աշխատանքային ծանրաբեռնվածությունը, անհրաժեշտ տեղեկատվության բացակայությունը և գործընթացներում ներգրավման սեռային անհամատեղելիությունը, ինչը

շեշտադրում է բնակավայրերում դեռևս գոյություն ունեցող կարծրատիպային մտածողության դրսևորումները:

5. ՀՀ խոշորացված համայնքների տարածքային կառավարման սոցիալ-տարածական պրակտիկաների նկարագրական վերլուծությունը, ինչպես նաև տվյալների կլաստերիզացումը թույլ տվեցին եզրակացնել, որ ՀՀ-ում տեղի ունեցած համայնքային խոշորացման գործընթացը, տարիների ընթացքում ձևավորել է համայնքային տարասեռ միավորումներ, որոնք հեռացել են համայնքային խոշորացման իրականացման նախնական նպատակներից: ՀՀ խոշորացված համայնքների բնակավայրերում տարածքային խոշորացումը չի զուգահեռվում համայնքային խոշորացմանը, ինչը նշանակում է, որ խոշորացման գործընթացը չի կրում հասարակական հարաբերություններով պայմանավորվող սոցիալական զգայնություն: Սոցիալ-տարածական պլանավորման, տարածական վերահսկման և կազմակերպման պրակտիկաների վերարտադրության ներկա և անցյալ ձևերի համարժեքությունը, որը, մասնավորապես, դրսևորվում է բնակչության՝ իրականացված փոփոխությունների ազդեցության ոչ նշանակալիության կամ բացակայության ընկալմամբ, պայմանավորում է սույն պրակտիկաների պարզ վերարտադրությունը: Այն, ենթադրում է, որ խոշորացված համայնքներում և, դրանք կազմող բնակավայրերում, եթե անգամ առկա են կառավարման հիմքով սոցիալական հարաբերությունների զարգացման միտումներ, դրանք չեն կրում համակարգային բնույթ և հետևապես չեն կարող հիմք հանդիսանալ բնակավայրերի կայուն ու շարունակական զարգացման համար:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հոդվածներում.

1. **Ենգիդունյան Վ.** «Բնակավայրերի Խոցելիությունը Տարածքային Կառավարման Համատեքստում. ՀՀ մարզերի և խոշորացված համայնքների օրինակով», ՎԷմ համահայկական հանդես, ԺԶ (ԻԲ) տարի, թիվ 3(87), հուլիս-սեպտեմբեր 2024, էջ 213-248, DOI: 10.57192/18291864-2024.3-213
2. **Ենգիդունյան Վ.** «ՀՀ խոշորացված համայնքների բնակչության տեղի զգացման գործոնային կառուցվածքը» Регион и мир, том XVI, №1(56), 2025, էջ 135-144 DOI: 10.58587/18292437-2025.1-135
3. **Yengidunyan V.** “Territorial Management in The Sphere of Social-Spatial Planning, Spatial Organization and Control as A Practice of Reproduction of The Social Space”, Journal of Sociology: Bulletin of Yerevan University, Vol. 15 No. 1(39), June 2024, pp. 73-84, https://doi.org/10.46991/BYSU:F/2024.15.1.073

4. **Yengidunyan V.** “Residents’ Participation and Spatial Engagement in the Context of Socio-Spatial Planning of Enlarged Communities of the Republic of Armenia”, Регион и мир, том XV, № 6 (55), 2024, pp. 163-170, DOI: 10.58587/18292437-2024.6-163
5. **Yengidunyan V.** “Factors Predicting Public Perceptions About The Impact of Community Enlargement in Settlements of Armenia”, Journal of Sociology: Bulletin of Yerevan University, Vol. 15, No. 2(40), December 2024, pp. 64-70, https://doi.org/10.46991/BYSU.F/2024.15.2.64
6. **Yengidunyan V.** “The Factors of Spatial Engagement of the Residents in the Context of Socio-Spatial Planning: On the Example of Settlements of Enlarged Communities of RA” Регион и мир, том XVI, № 2 (57), 2025, pp. 183-187, DOI: 10.58587/18292437-2025.2-183

Енгидунян Ваган Варданович

«СОЦИАЛЬНО-ПРОСТРАНСТВЕННЫЕ ПРАКТИИ ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ В РАСШИРЕННЫХ ОБЩИН РА»

Диссертация на соискание ученой степени кандидата социологических наук по специальности 22.00.01 - «Методология социологических исследований, теории, социальные технологии и процессы». Защита состоится 17 сентября 2025 года в 15:00 на заседании специализированного совета Философии и социологии 013 КВОН РА, по адресу: 0025, г. Ереван, ул. Абовяна, 52а, Ереванский государственный университет.

Резюме

Цель данной диссертации: выявление **социально-пространственных практик территориального управления** в укрупненных общинах Республики Армения. В этом контексте были проанализированы особенности **укрупнения общин** как широко используемой практики территориального управления. Затем на основе построенных теоретико-методологических знаний было проведено исследование по выявлению социально-пространственных практик территориального управления, воспроизводимых посредством **пространственной организации, социально-пространственного планирования и пространственного контроля**. Согласно проведенному анализу, в контексте пространственной организации наблюдается непропорциональное физико-демографическое распределение населения как на региональном, так и на общинном уровне. Наиболее высокие показатели концентрации проявляются в

укрупненных общинах Ванадзора и Раздана, а по дисперсии населения лидируют общины Амасия и Татев, что уже создает неравные возможности для развития внутриобщинной инфраструктуры. Дальнейший анализ данных доказывает, что укрупненные общины Вайоц Дзора находятся в более тревожном положении по сравнению с другими общинами РА, что обусловлено, в частности, низким уровнем трудовых ресурсов, образования и здравоохранения в указанных поселениях. Исследования компонентов социально-пространственного планирования укрупненных общин дали ряд интересных результатов, касающихся чувства места и пространственного вовлечения. По данным факторного анализа, чувства места у населения определяется феноменами привязанности к месту, чувством общности и идентичности места, а в случае пространственной вовлеченности факторными компонентами являются физические, информационные и социальные вовлеченности. Как по чувству места, так и по пространственной вовлеченности результаты, зафиксированные у мужчин, выше, чем у женщин. Результаты желания участвовать и фактического участия в процессах планирования поселений показывают, что, несмотря на низкий уровень фактического участия, большинство желает участвовать в вышеупомянутых процессах. И здесь показатели мужчин значительно превышают показатели, зарегистрированные среди женщин. Параллельно с описательным анализом данных была построена регрессионная модель взаимодействия желания жителей участвовать в изменениях, происходящих в населенных пунктах и пространственной вовлеченности. По результатам исследования подтверждена гипотеза о том, что увеличение индекса пространственной вовлеченности увеличивает вероятность желания населения участвовать в изменениях, реализуемых в населенных пунктах. Было также изучено общественное мнение об укрупнении, и, согласно данным, среди респондентов преобладало мнение об отсутствии эффекта укрупнения. Регрессионный анализ, проведенный для проверки влияния других переменных на регистрируемые показатели восприятия воздействия расширения, показал, что рост социального капитала, местного лидерства и индекса дисперсии населения увеличивает вероятность позитивного восприятия населением последствий укрупнения общин. Комплексное исследование последнего компонента территориального управления – пространственного контроля – показало, что большинство населения доверяет местным лидерам и органам местного самоуправления. В результате двухэтапного кластерного анализа стало ясно, что укрупненная община Гавар не только отличается низким уровнем пространственной организации, но и чувства места,

местного лидерства и пространственной вовлеченности. Обсуждаемые результаты, в контексте пространственной организации, социально-пространственного планирования и пространственного контроля позволяют сделать вывод, что, территориальное укрупнение в населенных пунктах РА не сочетается с укрупнением общин, а значит, процесс укрупнения не несет в себе социальной чувствительности, определяемой общественными отношениями. В этом контексте происходит простое воспроизводство социально-пространственных практик, что определяет **многомерную уязвимость** укрупненных собщин РА.

Yengidunyan Vahan Vardan

"SOCIO-SPATIAL PRACTICES OF TERRITORIAL MANAGEMENT IN ENLARGED COMMUNITIES OF RA"

Dissertation submitted for receiving academic degree of the candidate of sociology under the speciality 22.00.01 - "Methodology of sociological research, theories, social technologies and processes". The public defense of the dissertation will take place on September 17, 2025, at 15:00 at the session of HESC «Philosophy and Sociology» Specialized Council 013 based in Yerevan State University. Address: 0025, Yerevan, 52a Abovyan St., YSU.

Summary

The aim of the dissertation is to identify the **socio-spatial practices** of **territorial managemet** in the enlarged communities of the Republic of Armenia. In this context, the features of **community enlargement** as a widely used practice of territorial management were analyzed. Then, based on the constructed theoretical-methodological knowledge, research was conducted to identify socio-spatial practices of territorial management, reproduced through **spatial organization, socio-spatial planning** and **spatial control**. According to the analysis, in the context of spatial organization, there is a disproportionate physical and demographic distribution of the population at both the regional and community levels. The highest concentration rates are manifested in the enlarged communities of Vanadzor and Hrazdan, and in terms of population dispersion the communities of Amasya and Tatev are leading, which already creates unequal opportunities for the development of intra-community infrastructure. Further analysis of the data proves that the enlarged communities of Vayots Dzor are in a more alarming situation compared to other communities of the Republic of Armenia, which is due, in particular, to the low level of labor resources, education and health care in these settlements. The research of the socio-spatial planning components of enlarged

communities has produced a number of interesting findings regarding sense of place and spatial engagement. The population's sense of place is determined by the phenomena of place attachment, sense of community and place identity, and in the case of spatial engagement, the factor components are physical, informational and social engagements. Both in terms of sense of place and spatial engagement, the results recorded for men were higher than for women. The results of willingness to participate and actual participation in settlement planning processes show that, despite the low level of actual participation, the majority are willing to participate in the mentioned processes. Here again, the rates for men are significantly higher than those recorded for women. In parallel with the descriptive analysis of the data, a regression model was constructed of the interaction between residents' willingness to participate in changes occurring in settlements and spatial engagement. The results of the study confirmed the hypothesis that an increase in the spatial engagement index increases the likelihood of the residents' willingness to participate in changes implemented in settlements. Public opinion on the enlargement was also examined, and according to the data, the prevailing view among respondents was that the enlargement had no effect. Regression analyses conducted to test the influence of other variables on the reported measures of perception of the impact of enlargement showed that increases in social capital, local leadership, and population dispersion index increased the likelihood of positive perceptions of the impact of community enlargement by the residents. A comprehensive study of the last component of territorial management – spatial control – showed that the majority of the population trusts local leaders and local self-government bodies. As a result of a two-stage cluster analysis, it became clear that the enlarged community Gavar was not only characterized by a low level of spatial organization, but also a sense of place, place leadership and spatial engagement. The discussed results, in the context of spatial organization, socio-spatial planning and spatial control, allow us to conclude that; territorial enlargement in the settlements of the RA is not combined with the enlargement of communities, which means that the process of enlargement does not carry social sensitivity determined by social relations. In this context, there is a simple reproduction of socio-spatial practices, which determines the **multidimensional vulnerability** of the enlarged communities of the RA.

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ